

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

ՀՀ տարածքային կառավարման և զարգացման նախարարությունը (այսուհետ՝
Նախարարություն) հայտարարում է Նախարարությունում քաղաքացիական ծառայության
հետևյալ ժամանակավոր թափուր պաշտոնը զբաղեցնելու մասին

**Ֆինանսատնտեսագիտական, հաշվապահական հաշվառման և համայնքային բյուջեների
վարչության համայնքային բյուջեների բաժնի առաջին կարգի մասնագետ (ծածկագիր՝ 11-4.1-12)**

Հիմնական գործառույթները՝

- 1) Մասնակցում է տեղական ինքնակառավարման մարմիններին (այսուհետ՝ ՏԻՄ) վերաբերող ֆինանսական բնույթի իրավական ակտերի նախագծերի վերաբերյալ առաջարկությունների մշակման աշխատանքներին.
- 2) մասնակցում է համայնքային բյուջեների կատարման վերաբերյալ տեղեկատվության պարբերաբար ստացման, վերլուծության, ամփոփման աշխատանքներին.
- 3) Բաժնի պետի հանձնարարությամբ մասնակցում է յուրաքանչյուր տարի համայնքներին նպատակային ֆինանսական հատկացումների (սուբվենցիաների) տրամադրման նախագծերի մշակման աշխատանքներին.
- 4) Բաժնի պետի հանձնարարությամբ մասնակցում է միջհամայնքային միավորումների գործունեության վերաբերյալ առաջարկությունների մշակման աշխատանքներին.
- 5) մասնակցում է համայնքների դեֆիցիտային բյուջեների հաստատման վերաբերյալ պաշտոնական եզրակացությունների մշակմանը.
- 6) մասնակցում է համայնքների կողմից տեղական ՏԻՄ-երի ֆինանսական ոլորտին վերաբերող տեղեկատվական համակարգերի վարմանը, մասնավորապես՝ անշարժ գույքի և փոխադրամիջոցների մասով և մասնակցում գործընթացի նկատմամբ մշտադիտարկմանը.
- 7) մասնակցում է ՏԻՄ-երից իրենց ֆինանսական գործունեության վերաբերյալ ընթացիկ տեղեկատվության և հաշվետվությունների ստացման աշխատանքներին.
- 8) մասնակցում է Նախարարության պաշտոնական ինտերնետային կայքէջում տեղադրելու նպատակով ՏԻՄ-երի ֆինանսական ոլորտին առնչվող նյութերի տրամադրման աշխատանքներին.
- 9) Բաժնի պետի հանձնարարությամբ մասնակցում է ՏԻՄ-երի ֆինանսական գործունեությանը վերաբերող քաղաքացիների նամակների (դիմումների և բողոքների) սահմանված կարգով քննարկման աշխատանքներին.
- 10) վարում է տարատեսակ տեղեկատվական շտեմարաններ, մասնավորապես՝ անշարժ գույքի և փոխադրամիջոցների մասով.
- 11) Բաժնի պետի հանձնարարությամբ մասնակցում է առաջիկա տարվա Հայաստանի Հանրապետության պետական բյուջեից համայնքներին նախատեսվող ֆինանսական համահարթեցման դոտացիաների հաշվարկման և օրենքով սահմանված դեպքերում՝ ընթացիկ տարվա ըստ առանձին համայնքների հաստատված ֆինանսական համահարթեցման դոտացիաների վերահաշվարկման աշխատանքներին.
- 12) Բաժնի պետի հանձնարարությամբ մասնակցում է Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության կողմից ներկայացված՝ համայնքների բյուջեների նախագծերի մշակման և Հայաստանի Հանրապետության պետական բյուջեից հատկացումներ ստանալու նպատակով բյուջետային ֆինանսավորման հայտերը կազմելու և ներկայացնելու վերաբերյալ պարտադիր բնույթի մեթոդական ցուցումների և խորհրդատվական բնույթ կրող ուղեցույցների տրամադրմանը ՏԻՄ-երին.

13) Բաժնի պետի հանձնարարությամբ մասնակցում է Հայաստանի Հանրապետության պետական մարմինների և ՏԻՄ-երի կողմից ներկայացված՝ համայնքներին Հայաստանի Հանրապետության պետական բյուջեից տրամադրվող ֆինանսական համահարթեցման դոտացիաների գումարների հաշվարկներում կիրառվող տվյալների հաշվառման աշխատանքներին.

14) Բաժնի պետի հանձնարարությամբ իրականացնում է Բաժնի առջև դրված գործառնություններից և խնդիրներից բխող իրավական ակտերի, առաջարկությունների, եզրակացությունների և այլ փաստաթղթերի պահպանության և արխիվացման աշխատանքները.

15) Բաժնի պետի հանձնարարությամբ մասնակցում է Բաժնի աշխատանքային ծրագրերի մշակման աշխատանքներին.

16) իր լիազորությունների շրջանակներում, ինչպես նաև Բաժնի պետի հանձնարարությամբ նախապատրաստում է առաջարկություններ, տեղեկանքներ, հաշվետվություններ, զեկուցագրեր և այլ գրություններ:

Իրականացնում է պաշտոնի անձնագրով սահմանված այլ լիազորություններ:

Նշված ժամանակավոր թափուր պաշտոնը զբաղեցնելու համար նաև պահանջվում է՝

- տնտեսագիտություն (էկոնոմիկա) և կառավարում (մենեջմենթ) մասնագիտությունների գծով բարձրագույն կրթություն.

- պաշտոնի անձնագրի 10-րդ կետի 2-րդ ենթակետում նշված իր լիազորությունների հետ կապված իրավական ակտերի անհրաժեշտ իմացություն, ինչպես նաև տրամաբանելու, տարբեր իրավիճակներում կողմնորոշվելու ունակություն, անհրաժեշտ տեղեկատվության տիրապետում.

- համակարգչով և ժամանակակից այլ տեխնիկական միջոցներով աշխատելու ունակություն.

- անհրաժեշտ (պարտադիր) կառավարչական հմտությունների և ունակությունների, ինչպես նաև սույն պաշտոնի անձնագրով նախատեսված գործառնություններից բխող կառավարչական հմտությունների և ունակությունների տիրապետում (Ցանկեր N 1-2):

- Ժամանակավոր թափուր պաշտոնը զբաղեցնելու ժամկետը սահմանվում է մինչև նշված թափուր պաշտոնը մրցույթի արդյունքում հաղթող ճանաչված մասնակցի կողմից զբաղեցնելը:
- Դիմումների ընդունման վերջին ժամկետն է՝ 15.01.2019թ.
- Աշխատավարձի չափը՝ 111115 (մեկ հարյուր տասնմեկ հազար հարյուր տասնհինգ) ՀՀ դրամ:
- Աշխատանքի վայրը՝ ք. Երևան, Հանրապետության հրապարակ, Կառավարական տուն 3, հեռ. 010-511-355, էլ. փոստ՝ n.kirakosyan@mta.gov.am

Դիմող ՀՀ քաղաքացիները պետք է ներկայացնեն հետևյալ փաստաթղթերը՝

- դիմում Նախարարության գլխավոր քարտուղարի անունով (դիմումի ձևը կցվում է),
- տվյալ պաշտոնն զբաղեցնելու համար մասնագիտական գիտելիքների և աշխատանքային ունակությունների տիրապետման տեսանկյունից ներկայացվող պահանջների բավարարումը հավաստող փաստաթղթերի՝ դիպլոմի /ների/, վկայականի /ների/ պատճենները բնօրինակների հետ միասին,

- արական սեռի անձինք՝ նաև զինվորական գրքույկի կամ դրան փոխարինող ժամանակավոր գորակոչային տեղամասից կցագրման վկայականի պատճենները՝ բնօրինակի հետ միասին, կամ համապատասխան տեղեկանք,
- մեկ լուսանկար 3+4 սմ չափսի,
- անձնագրի կամ նույնականացման քարտի պատճենը:

ՀՀ քաղաքացին փաստաթղթերը ներկայացնում է անձամբ կամ էլեկտրոնային փոստի միջոցով:

Փաստաթղթերն ընդունվում են ամեն օր՝ ժամը 09:30-ից 12:30-ը և 14:00-ից 15:00-ը, բացի շաբաթ և կիրակի օրերից:

Դիմումի ձև

Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման
և զարգացման նախարարության գլխավոր քարտուղար
պարոն Մ. Բաղդասարյանին

-----ից
դիմողի անունը, հայրանունը, ազգանունը

դիմողի հասցեն

դիմողի անձնագրի տվյալները, հեռախոսահամարը

ԴԻՄՈՒՄ

Ծանոթանալով ՀՀ տարածքային կառավարման և զարգացման նախարարության կողմից հրապարակված հայտարարությանը՝ խնդրում եմ Ձեզ ժամկետային աշխատանքային պայմանագրով նշանակել ինձ ՀՀ տարածքային կառավարման և զարգացման նախարարության

Ժամանակավոր թափուր պաշտոնի անվանումը, ծածկագիրը

Ժամանակավոր թափուր պաշտոնում:

Հայտնում եմ, որ.

1. Համակարգչային և ժամանակակից այլ տեխնիկական միջոցներով աշխատելու ունակություն

(ունենմ, չունենմ)

2. Տիրապետում եմ համակարգչային ծրագրերին (Վինդոուզ, Վոռդ, Էքսել, Աքսես և այլն)

3. Դատական կարգով անգործունակ կամ սահմանափակ գործունակ

(ճանաչված եմ, ճանաչված չեմ)

4. ՀՀ կառավարության որոշմամբ հաստատված հիվանդությունների ցանկում ընդգրկված հիվանդություններից որևէ մեկով

(տառապում եմ, չեմ տառապում)

5. Այլ վճարովի աշխատանք (բացի գիտական, մանկավարժական, ստեղծագործական և ընտրական հանձնաժողովի անդամի կարգավիճակից բխող աշխատանքից)

(իրականացնում եմ, չեմ իրականացնում)

6. Անձամբ ձեռնարկատիրական գործունեությամբ _____

(գրադվում եմ, չեմ գրադվում)

7. Անմիջական ենթակայության կամ վերահսկողության տակ մերձավոր ազգակցական կամ խնամիական կապերի (ծնող, ամուսին, զավակ, եղբայր, քույր, ամուսնու ծնող) մեջ

(գտնվում եմ, չեմ գտնվում)

Նախագրուշացված եմ՝ կեղծ տվյալներ և փաստաթղթեր ներկայացնելու համար, ժամանակավոր թափուր պաշտոնում նշանակվելու դեպքում զբաղեցրած պաշտոնից ազատվելու և սահմանված կարգով պատասխանատվության ենթարկվելու մասին:

Դիմող՝ _____

ստորագրություն

անուն, ազգանուն

«-----»----- 2019 թ.